

Տեղեկատվություն

<<Դիլիջան>> ԱՊ ՊՈԱԿ-ի 2014թ-ի դեկտեմբեր ամսվա կատարված աշխատանքները

Հիմք ընդունելով ՀՀ բնապահպանության նախարարի 20.11.2014թ-ի թիվ 353-Ա հրամանը և <<Դիլիջան>> ԱՊ ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ-ի 21.11.2014թ-ի թիվ 61 հրամանը դեկտեմբեր ամսում <<Դիլիջան>> ԱՊ ՊՈԱԿ-ի տարածքը բաժանվեց հինգ մասի՝ դեկտեմբերի երեքից պետական գրանցում ստացան հետևյալ մասնաճյուղերը՝

- <<Դիլիջան տեղամաս>> մասնաճյուղ
- <<Շամախյան տեղամաս>> մասնաճյուղ
- <<Հաղարծին տեղամաս>> մասնաճյուղ
- <<Գոշ տեղամաս >> մասնաճյուղ
- <<Աղավնավանք տեղամաս>> մասնաճյուղ:

Մասնաճյուղերի տարբեր պահաբաժիններում հայտնաբերվել և արձանագրվել են ապօրինի հատված 56 հատ ծառ, որոնց համար կազմվել են 10 հատ անտառխախտման արձանագրություն: Մեկ անտառխախտման արձանագրությունը կազմվել է 2 խմ. վառելափայտի համար: Կազմված անտառխախտման արձանագրությունները ներկայացվել են ՏԲՊՏ՝ ընթացք տալու:

Կազմակերպության բոլոր բաժինները ներկայացրել են իրենց կատարած աշխատանքների տարեկան հաշվեդրությունները և 2015թ-ի աշխատանքային պլանի նախագիցը՝ ՀՀ բնապահպանության նախարարարություն ներկայացնելու համար:

Շարունակվում են են 2015-2019թթ-ի Կառավարման պլանի նախագի մշակման աշխատանքները:

Ավարտվեցին Կովկասի բնության հինմադրամի և <<Դիլիջան>> ազգային պարկ ՊՈԱԿ-ի միջև կնքված դրամաշնորհի պայմանագրի համաձայն՝ <<Դիլիջան>> ազգային պարկի <<Այցելուների կենտրոն>> մասնաշենքի

վերանորոգման աշխատանքները և <<Այցելուների կենտրոն>> մասնաշենքը բացեց իր դռները այցելուների առջև:

Ամանորի տոնակատարության նախօրեին <<Դիլիջան>> ազգային պարկ ՊՈԱԿ-ի տարածքներում բուսական և կենդանական աշխարհի պահպանումն առավելապես ուժեղացնելու՝ հատկապես, փշատերև ծառատեսակների հատումները կանխարգելելու, ինչպես նաև որսագողության դեմ տարվող պայքարն առավելագույնս արդյունավետ կազմակերպելու նպատակով տնօրենի հրամանի համաձայն իրականացվել են խստացված միջոցառումներ՝ 10.12.14թ-ից մինչև 31.12.14թ-ը պահպանության, գիտական, վարչական բաժինների և մասնաճյուղերի պատասխանատու աշխատակիցների ուժերով, կազմվել են հերթապահության գրաֆիկներ ըստ մասնաճյուղերի, որոնց կատարումը վերահսկվում է տնօրինության կողմից: